




ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԻՆԶԻՆՅԱՆ

ԼՈՒՅՍ ՏՈՒՐ, ՏԵՐ, ԱԶԱՅ ԻՄՈՑ

Մեր նախնիք շատ կգործածեին բառ մը, որը ներկա ժամանակներուն մոռացության տրված է. մեղսաթաթալ բառն է ատիկա, որ կնշանակե՝ մեղքերով լեցուն: Հատկապես Մեծ պահոց շրջանին պարտավոր ենք անդրադառնալ մեղքերով լեցուն մեր կյանքին, եկեղեցին կհրավիրե իր անդամներն ու զավակները, որպեսզի սրբեն զանոնք զոջումով, ա. Գրքի ընթերցմամբ և աղոթքով:

Աստվածային հայտնությունը սկիզբն մասնակիորեն տրված էր մարդկային ցեղին մարգարեներու միջոցաւ, որոնք խոշոր օրենսդիրներ ալ էին, բարոյական կանոններ տվողներ: Սակայն տեսնված է, որ ուր որ օրենք ու կանոն կհաստատվին, անօրենությունն ալ կմտնէ, կամ օրենքը անաստոյողներ կգտնվին, և ասիկա արարչագործության օրերն են ի վեր, և կշարունակվի մինչև այսօր: Սակայն, հակառակ այն իրողության, որ մարդիկ տեսքաւ անաստեցին Աստուծո պատվիրանները, ի լրումն ժամանակաց, երկնավոր մեր Հայրը դրկեց իր Միածին Որդին, որպեսզի Քրիստոսի շնորհով գերծ մնանք մեղքերն և փրկվինք: Իր մահվամբ մեղքին հետևանք եղող մահը վերցվեցաւ և իրմով անկյալ մարդկությունը ժառանգակից դարձաւ հավիտենական երանական կյանքին: Բայց այս չի նշանակեր, թե այլևս ազատ ենք մեղանշելու Աստուծո պատվիրաններուն դեմ: Այլ յուրաքանչյուր անձ պարտի ինք ևս հաղթել փորձության, մեղքին, իր կյանքին մեջ: Միածին Որդվոյն մարմնատությունն ու մարդանալը մեծագույն խորհուրդն է, որով հասկնալի կդառնա, թե Աստված որքան շատ

կսիրե մարդկային ցեղը, մեզ, մեղքերով լեցուն մարդիկը: Գեղեցիկ բան մը կամ կատարյալը սիրելը հեշտ է անշուշտ, բայց մեղսաթաթալ հետևաբար չսիրվելիք մարդը սիրել, աստվածային խորհուրդ է: Ահա վասիկ Քրիստոսով մեղքերն ազատվելու և Աստուծո որդեգիրը ըլլալու ավետիսն է, որ կբարոզէ քրիստոնեությունը սկիզբն ի վեր: «Որովհետև Աստված Քրիստոսով աշխարհը հաշտեցուց իր հետ, նոր կտակ կազմեց, մարդոց մեղքերը ջնջեց, ուստի կաղաչենք հաշտվեցէք Աստուծո հետ», կրես Պողոս առաքյալ (Բ Կորնթացւոց Ե 20) և անմիջապէս կհալելու՝ Քրիստոս, որ մեղք չէր գիտեր, մեր մեղքերը իր վրա առաւ, որպեսզի իրմով արդարանանք:

Զարմանալին, տարօրինակը, սակայն, մարդոց համառիւն է իրենց մեղքերուն մեջ: Բանավորությամբ ու ազատ կամեցողությամբ ստեղծված մարդը բովանդակ արարչագործության մեջ միակն է, որ ազատ է բարին կամ չարը գործելու: Երևակայեցէք մեկը, որ գետը ինկած է և կքշվի ջուրերեն, կամ փոսը ինկած է և առանձինն դուրս չկրնար գալ: Քրիստոս օգնության ձեռք կերկարե ու կը... մերժվի: Մերժողը իհարկէ կնախընտրէ, որ իր կեղտոտ փոսին մեջ մնա կամ մեղքերու հեղեղեն քշվի և մահվան հետախաղաղ ծովը երթա: Ո՛վ է հողաշեն մարդը, ի՞նչ կարևորություն ունի: Տնորաքանչյուր արարածի փրկությունը շատ խոշոր նշանակություն ունի արարչին համար: Սաղմոսներգու մարգարեն կհարցընէ. «Ո՛վ է մարդ՝ զի յիշես դու զնա, կամ որդին մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա» (Սաղ. Ը 5): Աստված չի կամիր մե-

դավորին մահը, այլ զդառնալն նորա և զկյալն:

Խոշոր տազանայի մը կամ սիրելիի մը մահիվան առթիվ կամ կյանքին անդրազույն արժեքը, իմաստը փնտրած առեմնիս, չե՞մք մտածեր մեր երկնավոր Հորը մասին: Ուղիղ ճանապարհը Անոր հասնելու, Քրիստոս ցույց կուտա մեզի, որովհետև ճշմարտությունն է, ինչպես որ հայտարարեց Պիղատոսի առջև, երբ այս վերջինը հարցուց իրեն՝ ի՞նչ է ճշմարտությունը: Ծշմարտությունը մեզ կազատագրե մեղքեն:

Ինքզինք ունայնացնողը, այլոց համար մեռնիլ հաճն առնողը միայն կրնա կյանք տալ: Ծանապարհ ըլլալուն համար Աստուծո հասնելու ուղին ցույց կուտա: Ծշմարտություն ըլլալուն իրեն կհավատանք: Կյանք ըլլալուն, իր միջոցով հավիտենապես կապրինք: Արդարև մեռալ և հարչալ, որպեսզի մեզի ալ կյանք տա: Մե՛նք ալ անձնասիրությունն ու ատելությունը, ազաճությունն ու հպարտությունը ունայնացնելով, արմատախիլ ընելով մեր ներքեն, կրնանք բարձրանալ սիրո ավելի ազնիվ ու բարձր մակարդակի մը, որ իբրև ցոլացում հիշեցնե Քրիստոսի անանձնական սերը:

Աղոթքի հասկացողությունն ու ըմբռնումը ծնունդ կտան ուրեմն Աստուծո՝ մեզի հանդեպ ունեցած սիրո անսահմանությանն, որ մեծագույն խորհուրդն է: Աղոթքը մեր պատասխանն է անկարագրելի, անճառելի այս սիրուն, որուն համար Պողոս առաքյալ կրնա. «Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուսա եւ ի սիրո մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց» (Ա. Կորնթ. Բ 9):

Աղոթելու բազմաթիվ տեսակներ ու ձևեր կան անշուշտ: Աստված ալ ինքզինք բազմաթիվ ձևերով հայտնած է մարդկության: Ծաւտ պատճառներ ունինք գոհություն և փառք տալու մեր երկնավոր Հորը՝ մեր խնդրանքները իրեն մատուցանելու: Կարելի է առանձնակի աղոթել և՛ հավաքաբար: Եկեղեցին, իբրև միասիւք մարմինը Քրիստոսի, հավատացյալներու խումբն է: Եկեղեցվո մեջ աղոթելու պահուն բոլոր հավատացյալներն ալ մի են ի Հիսուս Քրիստոս և որպես միություն կաղոթեն: Բայց հավաքական աղոթքը պետք չէ վերածվի ցուցամոլության, ինչպես տաճարին մեջ աղոթող Փարիսեցին (Լուկ. ԺԼ 10), այլ աղոթել և ըսել Աստուծո. «Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից ի մահ» (Սաղ. ԺԲ 4): Տէր, մաքիս լույս տուր, աչքերուս լույս տուր, որպեսզի բարին խորհիմ, խոսիմ և գործեմ, և չըլլա, որ մեղքերուս մեջ մահվամբ հավիտենապես ննջեմ:

Բոլոր մեծ մարգարեներն ալ կխոսին անպատ քաշվելու, այսինքն առանձնանալու, մտամոլովելու և աղոթելու մասին: ԶԱստված մեր կյանքին կեդրոնը ընտրելու և հանապազ աղոթք և գոհություն մատուցանել իհարկե ճիգ կպահանջե. ասոր համար այլոր առաքյալը կըսէ. «Յիշեցուցանեմ քեզ արծարծել զճնորհսն Աստուծոյ որ եմ ի քեզ» (Բ Տիմ. Ա 6):

Եթե բոլորովին անտեղի խնդրանքներ չեն մեր ներկայացուցածները Աստուծո, իրենի աղոթք, երկնավոր մեր Հայրը կիմանա զանոնք: Օրինակ, Դուկասու Ավետարանին մեջ կկարդանք, թե մարդու մը բարեկամը ուշ առեմ հեռավոր երկրէ մը ժամանած է, և ուրեմն հյուրընկալը հարկ կտեսնէ սեղան սարքելու և կեսգիշերին իր դրացիին դուռը կգարնէ, որպեսզի երեք նկանակ հաց խնդրէ: Դրացին մտքեն կըսէ. «Կեսգիշեր է, ես ալ, զավակներս ալ անկողին մտած ենք, հիմա չեմ կրնար ելլել և հաց տալ»: Բայց կհավելու Ավետարանը. ուզողին ծրարության, այսինքն համարձակության կամ աներեսության համար կելլէ և կուտա: Ապա դարձյալ կհավելու. «Դուք, որ չար եք, զիտեք ձեր զավակներուն ուզածները հայթայթել, որքան ավելի երկնավոր ձեր Հայրը բարիքներ կուտա անոնց, որոնք իր խնդրեն: Ապա ուրեմն բախեցեք և պիտի բացվի ձեզի, հայցեցեք և պիտի առնեք, եթե հոգվով և ճշմարտությամբ խնդրեք՝ ըսելով. «Օգնական իմ լեր Տէր, մի լքեր զիս եւ մի թողուր զիս Աստուած Փրկիչ իմ» (Սաղ. ԻԷ 9):

Նույն Դուկասու Ավետարանին մեջ կը կարդանք նաև, թե քաղաքին մեջ դատավոր մը կար, որը ոչ Աստուծոյն կվախմար և ոչ ալ մարդոցմէ կամչնար: Նույն քաղաքին մեջ այրի կին մըն ալ գալով դատավորին թախանձագին կխնդրէր, որ իր դատը տեսնէ և վերջացնէ: Օր մըն ալ դատավորը ձանձրացած կմտածէ և կըսէ յորովի. «Թե՛ն Աստուծոյն չեմ երկնչիր ու մարդոցմէ չեմ ամչնար, գոնե այս այրիին խնդրանքներն ազատելու համար սա դատը վերջացնեմ»: Դուկասու Ավետարանը կհավելու. «Եթե անիրավ դատավորը այսպես կըսէ, հապա ձեր երկնավոր ու արդար Հայրը չլսե՛ր ձեր աղոթքները: Անշուշտ ձեր խնդրանքներն ու աղոթքները կլսէ և կողորմի» (Լուկ. ԺԼ 2):

Սաղմուներգու մարգարեին հետ թող մեր աղոթքը ըլլա ըսել՝ լույս տուր, Տէր, աչաց իմոց, որպեսզի բարին խորհիմ, խոսիմ և գործեմ, չըլլա թե մեղքերուս բազմությունը զիս ընկղմեն, և ես մեղապարտ մահով ննջեմ: